ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/06»

ք. Երևան

«18» դեկտեմբերի 2017 թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, որի անունից 01.06.2017թ. լիազորագրի հիման վրա հանդես է գալիս լիազորված անձ՝ ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյանը, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան ստուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 110 000 (մեկ միլիոն մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Յուքոմ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, ըն. 4
ՀՀ՝	ՀՀ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00024873
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Կառավարիչ՝ Կ. Փոլադյան	Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ. Ասատուրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 18 » դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/06» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	32411130/320	***Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն** (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին և Երևան քաղաքում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին) /տեխնիկական բնութագիրը կից ներկայացվում է/*	դրամ	1 110 000	1	կից ներկայացվում է	Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 365 օրվա ընթացքում (սակայն ոչ ուշ. քան տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը)։ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը։

*** Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ցուքոմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն. 4
Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 00024873
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝
Կ. Աս[illegible]րյան

(ստորագրություն)

Հավելված 1

Հավելվածի անվանումը	Ձեռքբերվող ծառայության նկարագիր
Ինտերնետային կապի կրամադրման ծառայություն (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին և Երևան քաղաքում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)	Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան – ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 – 20 Մբիթ/վրկ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ – ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 – 20 Մբիթ/վրկ Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քաղաքացիական դատարան – ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 – 15 Մբիթ/վրկ Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քրեական դատարան - ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 – 15 Մբիթ/վրկ Հայաստանի Հանրապետության Վարչական վերաքննիչ դատարան – ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 – 10 Մբիթ/վրկ Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան – ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 – 15 Մբիթ/վրկ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան- ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 – 15 Մբիթ/վրկ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 40 – 10 Մբիթ/վրկ Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Գյուլիքևխվյան 20 – 10 Մբիթ/վրկ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 – 10 Մբիթ/վրկ Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Արշակունյաց պողոտա 24/1 – 10 Մբիթ/վրկ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Օտյան 53/2 – 10 Մբիթ/վրկ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան - ք. Երևան, Մովսես Խորենացի 162ա – 10 Մբիթ/վրկ Կարգադրիչների ծառայություն - ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 – 15 Մբիթ/վրկ Դատարանների արխիվ – ք. Երևան, Արա Մարտիրոսյան 3 – 5 Մբիթ/վրկ (միայն ինտերնետ) Առաջին բաժին - ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 – 5 Մբիթ/վրկ (միայն ինտերնետ) ***Վերը նշված հասցեներում անհրաժեշտ է ապահովել «Տեխնիկական բնութագիր 1»- ին համապատասխան *Ինտերնետային կապի կրամադրման ծառայություններ***

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1

N	Տեխնիկական բնութագրի բաղադրիչներ	Նկարագրությունը
1	Ինտերնետային կապի տեսակը	Օպտիկամանրաթելային մալուխով

	2	Ինտերնետային հասանելիություն	Վերը նշված արագություններով երաշխավորված առանց տրաֆիկի որևէ սահմանափակման ինտերնետ հասանելիություն:
	3	Միացման և որակի պահանջներ	▪ Անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրում միացման յուրաքանչյուր կետերում: ▪ Ապահովել ցանցային ուղղորդում բազմաթիվ պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ: ▪ Էլեկտրոնային հաղորդակցության և ինտերնետ հասանելիության հետ առաջացած խնդիրները պետք է լուծվեն անհապաղ, ծայրահեղ դեպքում ոչ ուշ քան 2 ժամվա ընթացքում: Մեկ ամսվա ընթացքում էլեկտրոնային հաղորդակցությունը կամ ինտերնետ հասանելիությունը առանձին-առանձին չպետք է խափանվի (բացակայի) ժամանակի հանրագումարում ոչ ավելի, քան 8 ժամ: ▪ Կապի կորստի դեպքում՝ անհապաղ և կապի վերականգնման աշխանքների վերաբերյալ՝ պարբերաբար տեղեկացնել պատվիրատուին՝ հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:
	4	Տվյալների փոխանցում (վերը նշված հասցեների և ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կենտրոնական մարմնի միջև)	Արագությունը՝ 10 Մբիթ/վրկ VLAN տեխնոլոգիայի միջոցով, Layer 2
	5	Տվյալների փոխանցում ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության սերվերային հանգույցի միջև: /ք.Երևան, Մելիք-Ադամյան 1/	Առնվազն 3 Մբիթ/վրկ արագություն ունեցող առանձնացված կապուղիով, Layer 2
	6	Այլ պահանջներ	▪ Վերջնական օգտագործողին խորհրդատվական և պարզաբանողական ծառայություն (Help Desk): Շուրջօրյա տեխնիկական սպասարկման ապահովում կցված մասնագետ(ներ)ի (կոնտակտային անձ(անց)) միջոցով: ▪ Ծառայության վերահսկում (մոնիթորինգ)՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով: ▪ Անհրաժեշտության դեպքում՝ վերը նշված հասցեներում ինտերնետի և տվյալների փոխանցման արագությունների վերաբաշխման փոփոխություն: ▪ Անհրաժեշտության դեպքում մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն: ▪ Անհրաժեշտության դեպքում կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն (օգտվողի

			կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերծանման տրամադրում և այլն): • Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով): • Ինտերնետային տրաֆիկի սովորականից մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուին:
	7	ՀՀ կառավարության 20.10.2016 թվականի N 1069 -Ն որոշման համաձայն «Ինտերնետ կապի տրամադրում» ծառայության նվազագույն պահանջներն են	1. «ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում» (ԴՈՍ/ԴԴՈՍ (DOS/DDOS) (այսուհետ՝ «ԴՈՍ») հարձակումներից պաշտպանված ինտերնետ կապ: 2. «ԴՈՍ» հարձակումներից պաշտպանության տեխնիկական նվազագույն պահանջներն են՝ 1) Պատվիրատուի բոլոր տեղեկատվական համակարգերը պետք է պաշտպանված լինեն մեկ և մի քանի հանրային և մասնավոր ԱյՓի (IP)-հասցեներից իրականացվող հարձակումներից. 2) ԹիՍիՓի (TCP) արձանագրություն՝ ԹիՍիՓի Սին (TCP SYN) – հարձակում Սին (SYN) փաթեթների գերբեռնման միջոցով, ոչ լեգիտիմ դրոշներով կոմբինացիա, հարձակում պատուհանի չափսի վրա, հարձակում սեսիայի վրա. 3) ԷյչԹիԹիՓի (HTTP) արձանագրություն՝ դանդաղ սեսիաներ, ԷսԷսԷլ (SSL) հարձակումներ, ԷյչԹիԹիՓի ԳԵԹ/ՓՈՍՏ ՅուԱռԷլ ֆլուդ (HTTP GET/POST URL flood). 4) ԴիԷնԷս (DNS) արձանագրություն՝ Քեշ Փոյզընինգ, ԴիԷնԷս ֆլուդ (Cache Poisoning, DNS flood), ավելացող ուժգնությամբ հարձակումներ. 5) ՅուԴիՓի/ԱյՍիԵմՓի (UDP/ICMP) արձանագրություն՝ ֆլուդ (flood). 6) ԱյՓի/ԹիՍիՓի/ՅուԴիՓի (IP/TCP/UDP) արձանագրություն՝ ֆրագմենտավորում. հետագայում հայտնաբերվող նոր մեխանիզմներով «ԴՈՍ» հարձակումներ:
	8	էլեկտրոնային փոստի ծառայություն	էլեկտրոնային փոստի թվով մինչև 100 հատ հասցեների տրամադրում court.am կամ judiciary.am դոմեյնի օգտագործմամբ, ինչպես նաև կոշտ սկավառակի տարածք առնվազն 30 ԳԲ:
	9	Չափման միավորը	Դրամ
Ծառայության մատուցման ժամկետը*			

*Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 365 օրվա ընթացքում (սակայն ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը): Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Հավելված N 2
«18» դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀՄՁԲ-17/06» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32411130/320	***Ինտերնետային կապի կրամադրման ծառայություն*** *(ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին և Երևան քաղաքում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)*	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ՝
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ցուքում» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն. 4
Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 00024873
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝
Կ. Ասատուրյան

(ստորագրություն)

Հավելված 3
«18» դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/06» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 18 » դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/06» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18.12.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/06» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

20 փետրվարի 2018թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, որի անունից 01.06.2017թ. լիազորագրի հիման վրա հանդես է գալիս լիազորված անձ՝ ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 18.12.2017թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/06» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Յուքոմ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն. 4
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00024873
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Լիազորված անձ՝ Կ. Ասատուրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 18 » դեկտեմբերի 2017 թ. կնքված
«ԴԴ-ԳՀՇՁԲ-17/06» ծածկագրով պայմանագրի
20 փետրվարի 2018 թ.կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32411130 /320	***Ինտերնետային կապի ապահովման ծառայություն (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին և Երևան քաղաքում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)***	-	222 000	222 000	499 500	499 500	499 500	777 000	777 000	777 000	1 110 000	1 110 000	1 110 000	1 110 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 900011192151
ՀԿՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ՝ 1570043102134100
ՀԿՀՀ՝ 00024873
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Լիազորված անձ՝ Կ. Ասատուրյան

(ստորագրություն)